Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-650[2]-27.10.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (1997 թվականի դեկտեմբերի 27-ի, ՀՕ-186, այսուհետ՝ օրենք) 19-րդ հոդվածի 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 15.6 ենթակետով՝

«15.6. Չմասնատվող բեռ փոխադրող ծանրաքաշ տրանսպորտային միջոցին օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով մեկանգամյա փոխադրման իրականացման հատուկ թույլտվություն տալու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 1-ին կետում հստակեցնել մատնանշված թերությունների վերացման սահմանված ժամկետները:	Առաջարկությունը ընդունված չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածով արդեն կարգավորված է հարցը, իսկ <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն իրավական ակտում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնություն-ները, ներքին հակասությունները:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 6-ին կետից հետո լրացնել նոր 7-րդ և 8-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝ «7) հատուկ թույլտվության հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: 8) հատուկ թույլտվության հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի հատուկ թույլտվություն ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: